ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Ա. Գ. ՔԱԼԱԾՅԱՆ
փիլիսոփայական գիտ. թեկնածու

IV ԴԱՐԻ 50-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐՐՈՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՆԵՐԸ

Ինչպես վկայում է եկեղեցական պատմագրությունը, Սարդիկեի 342-343 թթ. ժողովից հետո, շուրջ մեկ եւ կես դասնամյակ երրորդաբանական-դոգմատիկ բանավեճերը հանդարտվեցին: Բայց հակամարտող կողմերի միջեւ հաստատված «հաշտությունը» չափազանց անկայուն էր, իսկ ներեկեղեցական կյանքը դեռեւս բավական հեռու էր ցանկալի խաղաղությունից ու համերաշխությունից: Դա ուներ իր օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառները:

Դեռեւս հստակեցված չէին ինչպես հավատքային հիմնարար սկզբունքների վերաբերյալ ընդհանրական պահանջները, այնպես էլ՝ դրանց կիրառման սահմանները: Եկեղեցին եւ հոգեւոր դասը ակամա հայտնվել էին հասարակական-քաղաքական այնպիսի պայմաններում, որոնք նպաստել էր նրանց երկատմանը: Այդ պայմաններով թելադրված արտաքին անդորրը բավականին խաբուսիկ էր այն պատճառով, որ վիճաբանական կողմերի «փոխզիջումն» ապահովվել էր ոչ թե ներքին համաձայնության, այլ՝ պետական հարկադրանքի շնորհիվ: Թե՛ եկեղեցին եւ թե՛ պետական իշխանությունն այդպես էլ չկարողացան քիչ թե շատ միասնական մոտեցում դրսեւորել վիճաբանական գլխավոր հարցի՝ նիկեականության, հետեւաբար՝ երրորդաբանական-դոգմատիկ հարցերի նկատմամբ: Դեռեւս չլուծված էր մնում նաեւ հոգեւոր կյանքի կանոնական կարգավորման հարցը, որի պատճառով եկեղեցին IV դարի 50-ական թվականներ թեւակոխեց պահպանելով ներքին տարանջատվածությունը: Նվիրապետական դասի շրջանակներում գերիշխում էին անվստահությունն ու կասկածամտությունը, որ առավել եւս սրվեց այն բանից հետո, երբ Սարդիկեի ժողովի որոշմամբ աքսորված նիկեական եպիսկոպոսները վերադարձան իրենց նվիրապետական կենտրոններ[1]: Կացությունից խորապես դժգոհ էին նաեւ արեւելյան ընդդիմադիր եպիսկոպոսները, քանի որ նիկեականների վերադարձից հետո հավատքային դաշտում նրանց ձեռք բերած «բոլոր հաջողություններն» ի դերեւ ելան:

Նախկինի նման IV դարի 50-ական թվականներին եւս եկեղեցական միությանն արգե-

1 Նիկեական եպիսկոպոսներից շատերի դժգոհությունը կապված էր այն բանի հետ, որ քրիստոնեական արեւելքում Սարդիկեի ժողովական որոշումները կյանքի կոչվեցին «կիսով չափ»: Ճիշտ է, նրանք բոլորն էլ վերադարձան նախկինում իրենց կողմից ղեկավարվող նվիրապետական կենտրոններ, սակայն Սարդիկեի ժողովի կողմից «արիոսականության մեջ մեղադրված» արեւելյան նվիրապետները թեեւ «դատապարտված եւ աթոռազրկված» էին հռչակվել, այնուամենայնիվ, մնացել էին նույն կենտրոններում՝ շարունակելով իրենց նվիրապետական գործունեությունը:

լակող գլխավոր գործոնը ժամանակի դոգմատիկ վիճաբանության երկու հիմնական՝ նիկեական եւ արեւելյան պահպանողական (հականիկեական) հոսանքների մրցակցությունն էր: Դրացից առաջինները նիկեական Հանգանակի նկատմամբ իրենց կապվածությամբ եւ դրա պաշտպանության գործում դրսեւորած անզիջում դիրքորոշմամբ հակառակորդ ճամբարում «համառ մոլեռանդների» եւ «եկեղեցական խաղաղությունը վրդովողների» համարում ունեին: Գրեթե հանրաճանաչ էր (այդ թվում եւ պետական իշխանության համար), որ իրենց հաղթանակի համար նիկեականները պատրաստ էին զոհաբերել ամեն ինչ եւ այդ տեսանկյունից նրանց որակում էին «եկեղեցու եւ պետության անդորրը խախտողներ» անվամբ: Այդ շարակարգում անհամեմատ ավելի մեղմ բնութագրությամբ աչքի էր ընկնում հականիկեական հոսանքը: Նրանց կազմակերպված շարունակական ժողովները, ընդունված դավանաբանական բանաձեւերն ու հանգանակները պատրանք էին ստեղծում, թե «հանուն հավատքի անաղարտության» եւ «նախնի ավանդական հավատքի անխաթար պահպանման» նրանք պատրաստ էին ցանկացած փոխզիջման: Դրան էապես նպաստում էր նաեւ այն, որ սեփական դոգմատիկ պատկերացումները ներկայացնելով տարբեր, շատ անգամ՝ հակադիր հանգանակային բանաձեւերի միջոցով, հականիկեական ընդդիմությունն առաջադրում էր աշխարհայացքային այնպիսի լուծումներ, որոնք կարող էին լիովին ընդունելի լինել եկեղեցական խաղաղության ձգտող ցանկացած անհատի համար:

Դարաշրջանի ներեկեղեցական կյանքի վրա անուրանալի կնիք են թողել նաեւ **հոգեւոր կյանքում տեղ գտած էական մի շարք փոփոխություններ**: Դոգմատիկայի պատմության եւ եկեղեցագիտության մեջ հիշատակվող այդպիսի գործոններից է համարվում IV դարի 50-ականներին սկզբ առած եպիսկոպոսական դասի սերնդափոխությունը: Դրա հետեւանքով եկեղեցական «ասպարեզից դուրս եկան այնպիսի օժտված եւ անհաշտ թշնամիներ, ինչպիսիք էին Եւսեբիոս Նիկոմեդացին եւ Թեոգնիս Նիկեացին, բայց այդ փոփոխությունից նիկեականները ոչ միայն ոչինչ չշահեցին, այլեւ հակառակը՝ շատ բան կորցրեցին»: Ա. Սպասկին դա բացատրում է նրանով, որ «Եւսեբիոսի եւ Թեոգնիսի փոխարեն, մարդիկ, ովքեր հավատի եւ եկեղեցու շահերը պաշտպանում էին յուրովի եւ կողմնակից չէին նիկեականների դեմ չափից դուրս կոպիտ պայքարին, ընդդիմության գլուխ կանգնեցին նորերը, որոնք իրենց հետեւում չունեին ո՛չ բարի անցյալ, ո՛չ եկեղեցում բարոյական հեղինակություն, մարդիկ, որոնք պատրաստ էին քաղաքականության ցանկացած շրջադարձի փոխել իրենց համոզմունքները՝ **պալատական կարերիստներ**, որոնց ուժն արքունիքում ունեցած պատահական կապերն էին եւ կայսեր վրա ունեցած ազդեցությունը»[2]:

Բավականին բարդ իրավիճակ էր ձեւավորվել նաեւ եկեղեցական կյանքի վրա մեծ ազդեցություն ունեցող հասարակական-քաղաքական կյանքում: 350 թ. Մակենցիուս զորավարի կողմից դավադրաբար սպանվեց նիկեականության աչքի ընկնող պաշտպաններից մեկը՝ Արեւմտյան կեսար Կոստանսը: Եղբոր մահից հետո **Կոստանցիուս կայսրը լիակատար ազատություն ստացավ արմատավորելու կրոնական այն քաղաքականությունը, որն օգտակար էր համարում պետության շահերի համար**: Եւ երբ 353

2 **А. Спасскій.** История догматических движений въ эпоху Вселенскихъ Соборов (В связи с философскими учениями того времени) / Тринитарный вопрос (История учения о св. Троице). Сергиев Посад, 1914, с.335.

թ. Մակենցիուսի ինքնասպանությունից հետո Կոստանցիուսը դարձավ Հռոմեական կայսրության «բոլոր հարվածների» միահեծան տերն ու «հավիտենական թագավորը» (αἰώνιος βασιλεύς), նա միանգամայն անարգել կերպով սկսեց արմատավորել նիկեական ավանդության հետ բավականին թույլ կապ ունեցող կամ, ավելի ճիշտ կլինի ասել՝ հականիկեականության հենքի վրա ձեւավորված սեփական կրոնական քաղաքականությունը: Կայսեր կրոնական քաղաքականության «հաղորդիչներ» դարձան հականիկեական ընդդիմության նոր պարագլուխները, որոնք «...նիկեականության դեմ պայքարում ներմուծեցին նոր հնարներ. եթե նախկինում համագոյության պաշտպանների դեմ մեղադրանքներին այնուամենայնիվ ձգտում էին պաշտոնական տեսք տալ, ապա այժմ հակառակը՝ հակառակորդներին խոցելու եւ եկեղեցում սեփական դիրքը պահպանելու գլխավոր միջոց են դառնում բացահայտ խաբեությունն ու կոպիտ բռնաճնշումները»:[3]

Հականիկեականության պարագլուխների որդեգրած քաղաքականությունը չափազանց շահավետ էր նաեւ պետական իշխանության եւ անձամբ Կոստանցիուս կայսեր կրոնական քաղաքականության համար: **Մի կողմից նիկեականների նկատմամբ ունեցած ոչ բարեհաճ վերաբերմունքը**[4], **իսկ մյուս կողմից՝ կայսեր կրոնական քաղաքականության «շարժիչ ուժի»՝ Սարդիկեի ժողովի՝ «անասփված եւ անփորձ պատանիներ»**[5] **որակած հականիկեականների բացահայտ համագործակցությունն էլ դարձան IV դարի 50-ական թվականների ներեկեղեցական անհաշտ պայքարի ակունքները**: Այդ համատեքստում չափազանց հետաքրքիր է, որ IV դարի 30-ական թվականների նման 50-ական թվականներին եւս հականիկեական պայքարի անկյունաքարը դարձան նիկեական ջատագովների հալածանքները: Եւ դա ոչ միայն այն պատճառով, որ ինչպես արեւելքում, նույնպես եւ արեւմուտքում հերթական անգամ դատապարտվեցին ու աթոռազրկվեցին նիկեական եպիսկոպոսները[6]: «Նոր հականիկեականության» էութ-

3 Անդ, էջ 335-336:

4 Այդ անբարյացակամության հիմքում ընկած էր այն, որ Սարդիկայի ժողովից հետո Կոստանս կեսարը վճռական կերպով պաշտպան կանգնելով արեւմտյան եպիսկոպոսների պահանջներին, պատերազմի սպառնալիքով Կոստանցիուսից պահանջեց «կամ վերադարձնել Արեւմուտք աքսորված եպիսկոպոսներին, կամ՝ պատրաստվել պատերազմի»: Երկրի ներքին ու արտաքին դրությունից ելնելով Կոստանցիուսը որոշեց բավարարել եղբոր պահանջը: Աթանաս Ալեքսանդրացին, Պողոս Կոստանդնուպոլսեցին եւ Մարկելոս Անկյուրիացին վերադարձան իրենց եվիրապետական կենտրոնները: Հարկադրական այդ գիջումը Կոստանցիուսի մոտ անձնական թշնամանք ծնեց նիկեականների հանդեպ ու նաեւ այդ պատճառով բացարձակ միապետ դառնալուց հետո նրա կրոնական քաղաքականությունը բացահայտ հականիկեական ուղղվածություն ստացավ: Տե՛ս **Свт. Афанасий Великий.** Защитительное слово против аріан. Творения в четырех томах. Т. I, М., 1994, էջ 330, 331, 345-346, նույնի Посланіе епископа Аѳанасія къ монахамъ повсюду пребывающимъ о томъ, что сделано аріанами при Констанціи (История аріан). Творения в четырех томах. Т. II, էջ 117-118. **Сократ Схоластик**. Церковная история. М., 1996, кн. II, гл, 22, էջ 86-87. **Созомен Эрмий Саламинский**. Церковная история. СПб., 1851, кн. III, гл. 20, էջ 216. **Феодорит еписк. Кирский.** Церковная история. СПб., 1852, кн. II, гл, 8, էջ 129-131: Տե՛ս նաեւ St. **Hilary of Poitiers**. De Synodis / **Nicene and Post-Nicene Fathers** (ed. by Philip Schaff and Henry Wace). V. 9, Peabody, Massachusetts, 1995, 32, էջ 13 (հմմտ. **Migne J. P**. Patrologiae cursus completus. Series Latina (այսուհետ՝ **PL**), Acc. s. t. X, էջ 504); **Sacrorum conciliorum nova amplissima collectio** (ed. by J.-D. Mansi). T. III (anni 347-409). Austria: Graz, 1960, էջ 1215 sqq. եւ այլն:

5 Տե՛ս **Hilarius**. Fragment II, Kigne / **Migne J. P.** , **PL**, S. t. X, էջ 641:

6 Նիկեական եպիսկոպոսների, այդ թվում նաեւ Աթանաս Ալեքսանդրացու հերթական աքսորը տեղի ունեցավ Արելատի (353 թ.) եւ Մեղիոլանի (355 թ.) ժողովների որոշմամբ: Մանրամասները տե՛ս **Свт. Афанасий Великий.** Посланіе епископа Аѳанасія къ монахамъ повсюду пребывающимъ о томъ, что сделано аріанами

յունը բացահայտ կերպով դրսեւորվեց այն բանում, որ հոսանքը նախկինի նման չսահմանափակվեց միայն արեւելյան եպիսկոպոսների դեմ պայքարով: Սարդիկեի նախադեպը, հավասարապես նաեւ արեւմտյան եպիսկոպոսների նիկեական կողմնորոշումները մեկընդմիշտ հաղթահարելու միտումով Կոստանցիուս կայսրն իրեն հավատարիմ եպիսկոպոսների խորհրդով նիկեականության «չեզոքացման» հիմնախնդիրն այս անգամ փորձեց լուծել ոչ թե արեւելյան, այլ՝ արեւմտյան եպիսկոպոսական ժողովներում: Ընդ որում, թեեւ այդ գործընթացում նա հենվում էր արեւելյան ընդդիմադիր եպիսկոպոսների վրա, սակայն հիմնական դերակատարություն վերապահվեց արեւմտյան եպիսկոպոսներին:

«Հականիկեական նոր ճամբարի», հավասարապես նաեւ Կոստանցիուս կայսեր կրոնական քաղաքականության» օրինաչափ արդյունքն էլ հանդիսացավ 351 թ. Սիրմիումի ժողովը եւ նրա ընդունած դավանաբանական առաջին բանաձեւը, որը դարձավ հականիկեական «նոր» հոսանքի հավատքային մանիֆեստը: Մի փոքր ավելի ուշ այն լրացվեց **ստորադասության վարդապետության դիրքերից կազմված Սիրմիումի 357 թ. ժողովի 2-րդ բանաձեւով**: Մասնագիտական գրականության հանրաճանաչ տեսակետի համաձայն այդ բանաձեւը բոլոր ժամանակների հականիկեական ընդդիմության ամենաազդեցիկ աստվածաբանական «արտադրանքն» էր: Միանգամայն բացահայտ կերպով հակադրվելով նիկեական Հանգանակին, դավանաբանական այդ բանաձեւը հերթական անգամ հրապարակ նետեց ուղղադավան եկեղեցու կողմից մերժված եւ իր դարն ապրած **աստվածաբանական ստորակարգության** վարդապետությունը: Սակայն ի տարբերություն ստորակարգության դասական ընբռնումների, սիրմիումական ստորակարգությունն աստվածաբանական կուռ հիմնավորում չուներ: Այդ տեսանկյունից միանգամայն ընդունելի է Ա. Սպասկու այն պնդումը, թե «...հրաժարվելով Աստվածորդու էության հարցի ուսումնասիրությունից, սիրմիումական բանաձեւն այդ ստորադասությունը զարգացնում էր մերկ ու ընդհանուր դատարկախոսությամբ, յուրաքանչյուրին հնարավորություն ընձեռելով դրանց ճշգրիտ իմաստը որոշել սեփական հայեցողությամբ: Այդ առնչությամբ նա հանդիսանում էր ոչ թե հավատի ուսումնասիրություն, ինչպես ներկայացնում էր իրեն, այլ՝ դիվանագիտական գործարք, որը հաշվարկված էր այն բանի համար, որ նախադասությունների ընդհանրությամբ ու բովանդակության բացակայությամբ դեպի իրեն գրավեր պայքարող բոլոր տարբերին»[7]:

Հենց այդ պատճառով Սիրմիումի դավանաբանական 2-րդ բանաձեւը ոչ միայն հակադրվեց նիկեականությանը, այլեւ անկատարության եւ արեւելյան պահպանողական երրորդաբանությանն անհարիր էության պատճառով դարձավ հականիկեական ընդդիմության քայքայման գլխավոր նախադրյալներից մեկը: «Այն (Սիրմիումի 2-րդ բանաձեւը - **Ա. Ք.**) վիճաբանական հարցեր չլուծեց, - այդ կապակցությամբ գրում է Ա. Սպասկին, - այլ

при Констанціи (История аріанъ), էջ 130-131, 145. **Свт. Афанасий Великий.** Защитительное слово, въ котором святый Аѳанасій оправдывает бѣгство свое во время гоненія, произведенного дукомъ Сиріаномъ, էջ 79, 95-96. **Hilarius**. Fragment VI, Kigne / **Migne J. P.** , **PL**, S. t. X, էջ 686 եւն:

7 **А. Спасскій.** История догматических движений въ эпоху Вселенскихъ Соборов (В связи с философскими учениями того времени) / Тринитарный вопрос (История учения о св. Троице), с.346.

միայն դրանք լռության մատնեց: Բնական է, որ դա չէր կարող բավարարել ոչ միայն նիկեական ժողովի աքսորված պաշտպաններին, որոնք այն անվանում էին Դոկրամիոսի ապտվածանարգանք, այլեւ նրանց, ովքեր նիկեական հանգանակի հակառակորդների շարքերում լինելով, պայքարում էին նրա դեմ»[8]: Եւ այդ առումով միանգամայն օրինաչափ է պնդել, որ **հիշյալ բանաձեւի հրապարակումից հետո նիկեական երրորդաբանությանը հակադիր «ավանդական» ընդդիմությունը բռնեց ապտիճանական անկման ուղին, եւ որքան էլ դա պարադոքսալ թվա, իրենով հող նախապատրաստեց եկեղեցում նիկեական վարդապետության վերջնական հաղթանակի համար**:

Մասնագիտական վերլուծական գրականության մեջ հականիկեական ընդդիմության ապտիճանական անկման վերաբերյալ միասնական կարծիք չկա եւ, բնականաբար, այդ հարցի համակողմանի ուսումնասիրությունը բնավ երկրորդական չէ: Այդ տեսանկյունից առաջին հերթին պետք է կարեւորել այն, որ հականիկեական ընդդիմության անկումը եկեղեցական կյանքի կարեւորագույն իրադարձություններից է: Սակայն ամենեին չպետք է աչքաթող անել ոչ պակաս կարեւոր այն իրողությունը, որ այդ անկումը դեռեւս ուղղադավանության վերջնական հաղթանակը չնշանավորեց: **Դարզապես դադարեց գոյություն ունենալ բավականին խայտաբղետ կազմ ունեցող հականիկեական հին ընդդիմությունը եւ նրա փոխարեն ասպարեզ իջան դոգմատիկ նորանոր հոսանքներ, որոնք ավելի արմատական քաղաքականության կողմնակիցներ լինելով՝ երրորդաբանական բանավեճերին առավել մեծ սրություն հաղորդեցին**: IV դարի 50-ական թվականների վերջերին հականիկեական ընդդիմության պառակտման արդյունքում չափազանց արդյունավետ գործունեություն ծավալեց ուղղադավանությանը հարող եպիսկոպոսների մի խումբ, որի աչքի ընկնող գործիչներից էին Գեորգ Լաոդիկեցին[9] եւ Բարսեղ Անկյուրիացին[10]:

---

8 Անդ:

9 Եկեղեցական մատենագրությունը բավական արժեքավոր տեղեկություններ է պահպանել Գեորգ Լաոդիկեցու մասին: Նա եղել է փիլիսոփայական հակումներ ունեցող ալեքսանդրիացի ազդեցիկ քահանաներից մեկը, որը նախապես միջին դիրք է գրավել (քանի որ չէր դատապարտում Արիոսին եւ չէր արդարացնում Ալ. Ալեքսանդրացուն) IV դարասկզբի հակամարտող երրորդաբանական հոսանքների միջեւ: Այդ պատճառով նա վտարվել է Ալեքսանդրիայից եւ ընդունելություն չգտնելով Անտիոքում՝ քահանայական ծառայության է անցել Արեփուզում: Հաշվի առնելով նիկեականների կողմից «հալածվածի» նրա կարգավիճակը, եւսեբիոսականների գործուն օժանդակությամբ Գեորգ քահանան դառնում է Լաոդիկեի եպիսկոպոս եւ անցում կատարելով հականիկեական ճամբար՝ դառնում է վերջինիս եռանդուն գործիչներից մեկը: Նրա անունն անփոփոխ կերպով հիշատակվում է IV դարի 30-40-ական թվականների հականիկեական բոլոր «գործարքներում»: Գեորգ Լաոդիկեցին 335 թ. Աթանաս Ալեքսանդրացուն դատապարտող Տիրի ժողովի ակտիվ գործիչներից էր, 341 թ. Անտիոքի ժողովների գործուն մասնակից, մոլի արիոսական Եւսեբիոս Էմեսացու պաշտպանը: Եւ պատահական չէր, որ Սարդիկեի ժողովի բանադրած «արիոսականների» շարքում հիշատակվում է նաեւ նրա անունը: Այդ ամենի մասին մանրամասն տե՛ս **Филосторгий.** Церковная история. СПб.,1854, кн. VIII, гл.17, էջ 390. **Сократ Схоластик**. Церковная история, кн. I, гл, 24, էջ 49 , кн. II, гл, 9, էջ 70 , гл, 26, էջ 94. **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, кн. III, гл. 5, էջ 172. **Свт. Афанасий Великий.** Защитительное слово противъ аріан, էջ 298. նույնի Посланіе епископа Аѳанасія къ монахамъ повсюду пребывающимъ о томъ, что сделано аріанами при Констанціи (История аріан), էջ 116. նույնի Посланіе о соборахъ, бывшихъ въ Ариминъ италійскомъ и въ Селевкіи исаврійском. Творения в четырех томах. Т. III, М., 1994, էջ 112-113. **Hilarius**. Fragment II, Kigne / **Migne J. P.** , **PL**, S. t. X, էջ 7 եւ այլն:

10 Մասնագիտությամբ բժիշկ Բարսեղ Անկյուրիացին, որին հեղինակներից ոմանք համարում են համանմանականների հիմնադիր, Մարկելոս Անկյուրիացուն դատապարտող Կ. Պոլսի 335 թ. ժողովից հետո ընտրվել է Անկյուրիայի եպիսկոպոս: Պերճախոսությամբ աչքի ընկնող հոգեւոր գործչի «ակնհայտ դիալեկտիկական

Պատմաեկեղեցական մատենագրությունը վկայում է, որ քաջ գիտակցելով Սիրմիումի 2-րդ բանաձեւի հակաեկեղեցական ուղղվածությունը[11], «ծպտված սաբելականության (նիկեականության - **Ա. Ք.**) դեմ պայքարող, սակայն՝ եկեղեցական հողի վրա կանգնած» Գեւորգ Լաոդիկեցին բացահայտորեն հանդես եկավ Հայր եւ Որդի Աստծու այլակեցության ընդգծված ջատագովներ Աեստիոսի եւ Եւդոքսիոս Անտիոքացու (Գերմանիկեցու) դեմ եւ ուղերձով դիմեց արեւելյան եպիսկոպոսներին՝ կոչ անելով «պայքարել հավատի նոր թշնամիների դեմ»: Լիովին համամիտ լինելով Գեւորգ Լաոդիկեցու հետ, Բարսեղ Անկյուրիացին օգտագործել է ընձեռված հարմար առիթը. Անկյուրիայում ավարտվել էր նոր եկեղեցու շինարարությունը, եւ նա ուղերձով դիմել է արեւելյան եպիսկոպոսներին, խնդրելով մասնակցել օծման հանդիսություններին եւ քննարկել «եկեղեցական գործերը»[12]: Եկեղեցական հավատի հարցերով մտահոգ եպիսկոպոսներից շատերը պատրաստակամություն հայտնեցին մասնակցելու առաջարկվող քննարկումներին, սակայն զարկական տոնակատարությունների պատճառով եպիսկոպոսներից շատերը չկարողացան ժամանել Անկյուրիա: Դրա հետեւանքով **358 թ. Անկյուրիայի ժողովին մասնակցեցին միայն 12 եպիսկոպոսներ**: Ու թեեւ ժողովական քննարկումները բազմամարդ չէին, դա ոչնչով չկարողացավ արգելակել ինչպես երրորդաբանական քննարկումների ընթացքը, նույնպես եւ ընդունված որոշումների պատմական նշանակությունը: Եւ ինչպես վկայում են վավերագրերը՝ եկեղեցական հարաբերությունների հետագա ներդաշնակեցման գործում **Անկյուրիայի ժողովի որոշումները անցումային կարեւոր դերակատարություն ունենալով դարձան 362 թ. Ալեքսանդրիայի ժողովին նախորդող հավատքային կարեւորագույն իրադարձությունը**: Դրա օրինաչափ արդյունքը եղավ նաեւ այն, որ կարճ ժամանակ անց Անկյուրիայի ժողովի որոշումների պաշտպանության դիրքերում կանգնեց Արեւելյան եպիսկոպոսների մեծ մասը:

Համակողմանիորեն քննարկելով արմատական հակաերրորդաբանական էությամբ

հակումները» լիովին դրսեւորվել են Փոտինի դեմ մղվող պայքարում: Նրա անունը հիշատակվում է նաեւ Սիրմիումի 1-ին ժողովի մասնակիցների թվում: Հականիկեականների ճամբարում նա հայտնվել է «սաբելականության»՝ Մարկելոսի եւ մարկելականության դեմ մղվող անհաշտ պայքարի արդյունքում: Մանրամասները տե՛ս **Филосторгий.** Церковная история, кн.III, гл.16, էջ 349.**Сократ Схоластик**.Церковная история, кн. II, гл, 29, էջ 97.**Созомен Эрмий Саламинский**.Церковная история, кн.II, гл.33, էջ 158-159, кн.III, гл.14, էջ 202.**Epiphan**, Haeres., LXXI, էջ 1 եւ այլն:

11 Բանաձեւը բացեիբաց հռչակում էր Հայր եւ Որդի Աստծու տարբերությունները. «...ոչ որ կասկածէ, որ Հաւր մեծ է, քան զՈրդի: Եւ ամէն որ հաստատապէս համաձայնեսցի, որ Հաւր իւր Փառաւք, արժանեաւք, յԱստուածութեամբ եւ Անուամբ բարձր քան զՈրդին...: Նոյնպէս յայտ է ամենայնի ուսմունքն այն կաթողիկէ, որ կայ դէմս երկուսս՝ Հաւր եւ Որդւոյ, եւ Հաւր բարձր է, իսկ յՈրդի ամենայնիւ ենթակայ է Հաւր: Եւ է Հաւրն անսկիզբ, անտես, անմահ եւ անկիրք: Իսկ յՈրդի ծնեալ ի Հաւրէ, Աստուած՝ յԱստծոյ եւ Լոյս՝ ի Լուսոյ». տե՛ս **Свт. Афанасий Великий.** Посланіе о соборахъ, бывшихъ въ Ариминъ италійскомъ и въ Селевкіи исаврійском, էջ 131-132 (բանաձեւի ամբողջական բնագիրը տե՛ս անդ, էջ 130-132), տե՛ս նաեւ **Сократ Схоластик**. Церковная история, кн.II, гл, 30, էջ 100-101. **J. N. D. Kelli** Early Christian Creeds. Singapore, 1993, էջ 114:

12 Տե՛ս **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, кн. IV, гл. 13, էջ 249: Հետաքրքրական է այն, որ 358 թ. Անկյուրիայի ժողովի անցկացումը չէր համաձայնեցվել քաղաքացիական իշխանությունների հետ, որի պատճառով պետական ոչ մի պաշտոնյա քննարկումներին մասնակից չդարձավ: Այն, գործնականում, զուտ եկեղեցական ժողով էր, որը հիշեցնում էր «եկեղեցական անկախության լավագույն ժամանակները». տե՛ս **А. Спасскій** История догматических движений въ эпоху Вселенскихъ Соборов (В связи с философскими учениями того времени) / Тринитарный вопрос (История учения о св. Троице), էջ 373:

աչքի ընկնող անոմեականության հարցը, Անկյուրիայի 358 թ. ժողովականները պատրաստակամություն հայտնեցին կործանելու այդ հերձվածը եւ տեղական հոգեւորականներին կոչ արեցին օժանդակել «ոչնչացնելու այդ շինծու չարիքը»[13]: Իսկ ժողովի հավատքային կարեւորագույն ակտն այն էր, որ նրանում **«առաջին անգամ հստակորեն բացահայտվեց նոր՝ համանմանական կուսակցության դոգմատիկ ծրագիրը եւ ժամանակի ապվածաբանական շարժման մեջ սկիզբ դրվեց այն շրջադարձին, որն ապիճանաբար հանգեցրեց հականիկեական ընդդիմության կործանմանը եւ Նիկեայում հռչակված Ս. Երրորդության վարդապետության հաղթանակին** (ընդգծումը մերն է - **Ա. Ք.**)»[14]:

Ի հակադրություն դարաշրջանի ոգուն՝ Անկյուրիայի ժողովը դավանաբանական հանգանակ չի հաստատել: Դոգմատիկայի պատմությանը նվիրված աշխատանքները համերաշխորեն հավաստում են, որ ժողովում մշակվել եւ հաստատվել է **ապվածաբանական բնույթի ավարտուն փաստաթուղթ**, որում հանգամանորեն շարադրված էին երրորդաբանական մի շարք լուծումներ: Ճիշտ է, դրանք իրենց անկատարության հետեւանքով նիկեական երրորդաբանության մակարդակի չբարձրացան, այնուամենայնիվ, հետեւողականորեն նախանշեցին այն ճանապարհը, որով պետք է անցներ քրիստոնեական արեւելքը՝ հականիկեական ընդդիմության վարանումները հաղթահարելու գործում:

«Այն բանից հետո, - հռչակում էին ժողովականները, - երբ հալածանքների հետեւանքով եկեղեցական հավատը ասես փոքձարկվել է կրակով, այն բանից հետո, երբ շուրջ քսան տարի առաջ դատապարտվել է Մարկելոսը եւ հավատ է շարադրվել Անտիոքի ու Սիրմիումի ժողովներում, երբ ամենայն հավանականությամբ բացատրվել են Սարդիկեում արեւմտյան եպիսկոպոսների հետ հավատի վիճաբանական բոլոր անդամները, երբ վերջապես արեւելքից՝ արեւմուտք իրական դարձավ եկեղեցու միասնացումը եւ վերացվեցին բոլոր գայթակղությունները, մենք մտածեցինք, որ խաղաղություն է հաստատվել, հույս ունեինք հանգստանալ եւ նվիրվել Աստծու ծառայությանը: Բայց պարզվեց, որ այդ ամենը ապարդյուն էին: Եկեղեցում ոչ միայն խաղաղություն չհաստատվեց, այլեւ հակառակը՝ մարդկության թշնամին սկսեց առավել ուժեղ գործել Հայր եւ Որդի Աստծու կապի եկեղեցական ուսմունքի դեմ»[15]:

Այդ դիրքերից էլ ժողովականները համոզված կերպով պնդում են, որ հավատքային հակամարտությունները կարգավորելուն միտված գործունեությունը թեեւ «բավարար համարել չի կարելի»՝ իրենք «անգոր են հետաձգել հարցի լուծումը»: Այդ պատճառով նրանք միահամուռ կերպով պնդում են, որ իրենց վրա են վերցնում «կաթողիկե եկեղեցու նորացման (Ղուկիանոսի հանգանակի - **Ա. Ք.**) եւ Սարդիկեի հաստատած հավատին համապատասխան Ս. Երրորդության մեկնաբանության ծանր գործը»: Այդ ամենը մեկ անգամ եւս

13 Տե՛ս **S. P. N. Epiphanii** Adversus Octoginta haereses / **Migne J.-P**. Patrologiae cursus completus. **Series Graeca** (այսուհետ՝ **PG**). T. XLII, Lib. III, T. I (haer. LXX-LXXVI: Contra Audianos, Photinianos, Semiarianos, Pneumatomachos, Aerium, Anomoeos). Parisis, 1864, Haeres LXXIII, col. 2:

14 **А. Спасскій.** История догматических движений въ эпоху Вселенскихъ Соборов (В связи с философскими учениями того времени) / Тринитарный вопрос (История учения о св. Троице), с.374.

15 **S. P. N. Epiphanii** Adversus Octoginta haereses / **Migne J.-P.**, **PG**, T. XLII, Lib. III, T. I (haer. LXX-LXXVI: Contra Audianos, Photinianos, Semiarianos, Pneumatomachos, Aerium, Anomoeos). Haeres LXXIII, col. 2.

հավաստում է, որ Անկյուրիայի ժողովականները դեռևս չեն ձգտել անցնել նիկեական ուղղադավանության, այլ հենվելով հականիկեական ընդդիմության հավատքային հիմնարար սկզբունքների վրա, ձգտել են **«կաթողիկե եկեղեցու հավատը» մերձեցնել Սարդիկեի ժողովի դավանաբանության ոգուն**: Ուստի իրականությանը համապատասխան է ասպվածաբանական գրականության մեջ շրջանառվող պնդումը՝ «...հանձին Անկյուրիայում հավաքված եպիսկոպոսների մենք պետք է ճանաչենք արևելյան ավանդական ասպվածաբանության ներկայացուցիչների, որոնց պահպանողականությանն էլ պարտական է հականիկեական շարժումը»[16]: Դրան զուգընթաց չի կարելի մերժել եւ այն, որ արևելյան պահպանողականության ջատագով ժողովականները ձգտում են վերանայել վերջինիս հավատքային որոշ սկզբունքներ (Սիրմիումի 2-րդ բանաձը) այն հիման վրա, որ դրանք այդպես էլ ի զորու չեղան եկեղեցում ցանկալի խաղաղություն հաստատել:

Դարաշրջանի հավատքային բանաձեւերից ընտրելով նրանք, որոնք առավել մոտ էին իրենց, անկյուրիական ժողովականները սուր քննադատության ենթարկեցին հատկապես անոմեական հակաերրորդաբանությանը: Նրանք փաստարկված կերպով ցույց տվեցին, որ անոմեականության գործունեության հետեւանքով ակնհայտ է դարձել, որ Հայր եւ Որդի Աստծու էության, ինչպես նաեւ՝ ասպվածային Անձերի ինքնուրոնության կամ տարանջատվածության մասին **հականիկեական ընդդիմության մինչ այդ առաջադրած լուծումները նպատակավրեպ են եղել**: Եւ այդուհանդերձ, նրանց երրորդաբանական լուծումները եւս հոգեհարազատ են հականիկեականության ոգուն: Այդ է վկայում Անկյուրիայի ժողովի հետեւյալ պնդումը. «Եթե վերանանք արարվածների արտաքին գոյությունից, առարկայական լինելուց եւ մարմնական այլ հատկանիշներից, ապա կմնա արարվածի մասին կատարյալ ու մաքուր ըմբռնումը, ինչպես որ Արարիչն է **ցանկացել**»[17]: Եւ քանի որ եկեղեցական ավանդական վարդապետությունը եւս սովորեցնում էր, որ Հայր Աստված Երրորդության մյուս Անձերի «սկիզբն ու ակունքն» է, ապա այդ ընբռնումից ակամա կարող է հետեւել, որ Որդի Աստծու կեցության պատճառը Հայր Աստվածն է: Ահա թե ինչու այդ միակողմանիությունը հաղթահարելու միտումով անկյուրիայի ժողովականները Ս. Երրորդության գոյաբանական հարցերի լուծման իրենց ուսմունքի հիմքում դնում են ուղղադավան երրորդաբանության «որդիության» վարդապետությունը:

«Իր աշակերտներին քարոզչության ուղարկելով, - այդ կապակցությամբ պնդում են նրանք, - Տերը չասաց. սովորեցեք բոլոր լեզուները եւ նրանց մկրտեցեք անժառանգի ու մարմնացյալի անունով, կամ ծնվածի ու անծինի անունով, կամ, վերջապես, Արարչի եւ արարվածի անունով, այլ ասաց՝ Հոր եւ Որդու անունով, եւ դա այն բանի համար, որ լսելով այդ անունները, մենք Հորը պատկերացնենք իբրեւ իր էությանը նմանվող Որդու պատճառ եւ Որդուն ընբռնենք իբրեւ Հորը նման»[18]: Այդ ամենից հետեւում է եւս մեկ հիմնարար հետեւություն՝ **հանդես գալով նմանական երրորդաբանության պաշտպանությամբ,**

16 **А. Спасскій.** История догматических движений въ эпоху Вселенскихъ Соборов (В связи с философскими учениями того времени) / **Тринитарный вопрос** (История учения о св.Троице), с. 376.

17 **S. P. N. Epiphanii** Adversus Octoginta haereses / **Migne J.-P.**, **PG**, T. XLII, Lib. III, T. I (haer. LXX-LXXVI: Contra Audianos, Photinianos, Semiarianos, Pneumatomachos, Aerium, Anomoeos). Haeres LXXIII, col. 3.

18 Անդ, հատվ. 4:

ժողովական եպիսկոպոսները ոչ միայն վճռական քայլ կատարեցին անոմեական (հետեւաբար՝ արիոսական) **հակաերրորդաբանությունը մերժելու, այլեւ՝ հաղթահարելու ուղղությամբ**: Այդ իրողությունն առաջին հերթին հավաստվում է նրանց կողմից առաջադրված նմանական երրորդաբանությամբ: «Եթե Որդու նկատմամբ Հայր Աստծո հարաբերության վերաբերյալ պատկերացումներում վերանանք ... նյութական հատկանիշներից, - հավաստում են նրանք, - **ապա կմնա նմանության հասկացությունը**, քանի որ ամեն մի հայր համարվում է իր էությանը նմանվողի հայր: Եւ հակառակը, եթե Հոր եւ Որդու անվանումից մարմնականի հետ միասին մերժվի նաեւ էությամբ նմանության ըմբռնումը, ապա չի մնա ո՛չ Հայրը, ո՛չ Որդին, այլ կմնան Արարիչն ու արարվածը, կմնա միայն արարիչ Աստվածը, այլ ոչ թե Հայրը, իսկ Աստծու մասին նման պատկերացումը կոչնչացնի քրիստոնեության տարբերությունը Աստծու արարչությունն ընդունող հրեությունից եւ հեթանոսությունից»[19]:

Համանմանության երրորդաբանությունն, ինչ խոսք, մերձենում է ուղղադավանությանը եւ իր էությամբ հակադիր է IV դարի 30-40-ական թվականների հակաերրորդաբանական ցանկացած հոսանքի: Բայց այն առավելապես ուղղված էր իր դարն ապրած արիոսականության եւ վերջինս վերածնել ցանկացող անոմեականության ու եւնոմեականության դեմ: Ի հակադրություն արիոսականության, Անկյուրիայի 358 թ. ժողովի որոշումներում հռչակվում էր՝ «ով Հայր եւ Որդի հասկացություններն ընդհանրացնում է մյուս արարածների նմանությամբ եւ ցանկանում է իմաստակել, թե Որդին առաջին արարվածն է՝ կամ անհրաժեշտությամբ եւ կամ առավելությամբ՝ եկեղեցական հավատ չի դավանում»: Արիոսականությունը մերժվում է եւ այն կապակցությամբ, թե «Որդի Աստված անբաժանաբար ունի Հայր Աստծու բոլոր հատկությունները, բայց ոչ իբրեւ նույնական, այլ՝ **նման**, քանի որ պարզ է, որ **նմանը երբեք չի կարող նույնական լինել նրա հետ, որի նկատմամբ նմանություն ունի**»:

Անկյուրիայի ժողովի որոշումները սուր ծայրով ուղղված էին նաեւ եւնոմեական հերձվածող երրորդաբանության դեմ: Մերժելով Եւնոմիոս Կիզիկիացու առաջադրած այն տեսակետը, թե Որդի Աստված ծնվել է Հայր Աստծո էներգիայից, Անկյուրիայի ժողովական հայրերը հռչակում են, որ «ըստ էներգիայի լինելով երկնքի, երկրի եւ ամենայնի արարիչ, Աստված չի արարում Որդուն», որ «Միածին Որդու Հայրը ըմբռնվում է ոչ թե իբրեւ Արարիչ, այլ իբրեւ ծնող Հայր, եւ նա ոչ թե էներգիայի հայր է, այլ իրեն նման էության Հայր: Եւ եթե մեկը Որդուն բոլորից բարձր դասելով անգամ մերժի Հորից Որդու ծնունդը, ապա այդ պարագայում անգամ Որդուն չի զանազանում արարվածներից[20]:

Այդ ամենն աներկբա վկայում են, որ աստվածաբանական տարբեր լուծումների միջոցով **Անկյուրիայի ժողովական հայրերը հետեւողանորեն ձգտում են հաղթահարել արիոսական եւ արիոսամետ հակաերրորդաբանության հիմնարար սկզբունքները**: Այլ կերպ ասած՝ **դրանով վճռական քայլ է կատարվում վերականգնելու ավանդական եկեղեցական դավանանքը**: **Ցավոք, այդ ամենն իրականացվեց մինչնիկեական երրորդաբանական եզրերով, եկեղեցու հնավանդ դավանանքի (հականիկեական ընդդիմության) դիրքերից**: Եւ միանգամայն օրինաչափ է, որ վերը նշված

19 Անդ, հատվ. 5-6:

20 Մանրամասները տե՛ս անդ, հատվ. 8-10:

միտումների արդյունքում Անկյուրիայի 358 թ. ժողովական եպիսկոպոսները հռչակում են ուղղադավան երրորդաբանությանը չափազանց մերձ հետևյալ վարդապետությունը. «**Որդին, որն էությամբ ծնվել է Հորը նման, էությամբ ոչ թե նույնական է, այլ՝ նման է Հորը**»[21]: Այդ կապակցությամբ միանգամայն ընդունելի է ռուս ասպվածաբան Ա. Սպասկու պնդումը. այդ ճանապարհով անկյուրիական հայրերը հանգեցին **Հայր եւ Որդի Աստծու էական նմանության ըմբռնմանը**, ինչն այդ ժամանակից սկսած դարձավ համանմանականների՝ հականիկեական ընդդիմությունից անջատված արեւելյան եպիսկոպոսների մի խմբի հավատի հիմնական «անդամը»: Այդ ամենի արդյունքում «Անկյուրիայի ժողովի որոշումները վաղուց կուտակված վառելանյութի մեջ նետված կայծ հանդիսացավ: Ժողովում առաջին անգամ պաշտոնապես հանդես եկավ արեւելյան եպիսկոպոսների համանմանական կուսակցությունը, որը վերջին հարվածը հասցրեց հականիկեական ընդդիմությանը եւ վերջինս տրոհվեց միանգամայն տարբեր տարրերի՝ ձեւավորելով մի քանի տարանջատ, մեկը մյուսին թշնամական խմբեր»[22]:

Սակայն Անկյուրիայի ժողովին եւս վիճակված չէր «հաշտարարի» դեր կատարել: Կոստանցիուս կայսեր իշխանության վերջին տարիները նշանավորվեցին նույնքան բուռն եկեղեցական վիճաբանություններով ու «դոգմատիկական գործունեությամբ», որքան՝ իշխանության առաջին տարիներին: Խնդրո առարկա տարիներին եւս Արեւելյան եկեղեցին շարունակում էր ցնցվել անվերջ թվացող ժողովների եւ դրանց հրապարակ նետված դոգմատիկ բանաձեւերի ու հանգանակների բեռի տակ: «Դարձյալ մի ժողովին հաջորդում էր մյուսը, - այդ կապակցությամբ գրում է Ա. Սպասկին, - հավատի հավանաբար արդեն ընդունված մի նախագիծ փոխարինվում էր մյուսով, որն իր տեղը դարձյալ զիջում էր երրորդին: Եկեղեցում եւ պետության մեջ առաջնություն ձեռք բերելու լարված վիճաբանությունների ընթացքում իսպառ մոռացության մատնվեցին նախկին թշնամի նիկեականները. խոսքը այն մասին էր, որպեսզի ինչ-որ modus vivendi հաստատվի, ստեղծվի թեկուզ արտաքին բանաձեւ, որին կհամաձայներ եկեղեցական մեծամասնությունը»[23]:

Սակայն եկեղեցու համար ցանկալի համերաշխության պահը դեռեւս հեռավոր երազանք էր: Դատելով վավերագրերից՝ ժամանակի դոգմատիկ հոսանքներից շատերի համար հավատքային հարցերը օրախնդիր չէին: Ավելի ճիշտ, առաջադրելով այս կամ այն հավատքային բանաձեւը կամ հանգանակը, երրորդաբանական հակադիր հոսանքները չէին սահմանափակվում միայն նիկեականության դեմ պայքարով: Եթե հիմնահարցի լուծումը կապված լիներ միայն հավատքային դաշտի հետ, դոգմատիկ այդ նորարարություններն, անկասկած, կմարեին իրենց խանձարուրում: Բայց հակաերրորդաբանական ազդեցիկ բոլոր հոսանքներն էլ իրենց դոգմատիկ գործունեությունը սերտորեն շաղկապում էին պետական իշխանության կրոնական քաղաքականության հետ եւ հանդես էին գալիս վերջինիս

21 Անդ, հատվ. 4 (ընդգծումը մերն է - **Ա. Ք.**):

22 **А. Спасскій.** История догматических движений въ эпоху Вселенскихъ Соборов (В связи с философскими учениями того времени) / Тринитарный вопрос (История учения о св. Троице), с.382.

23 **А. Спасскій.** История догматических движений въ эпоху Вселенскихъ Соборов (В связи с философскими учениями того времени) / Тринитарный вопрос (История учения о св. Троице), с.382-283.

հոգեւոր հիմքերի եւ ուղղորդող ուժի որակով: Իսկ դրանից հետեւում էր, որ դեռեւս **ոչ մի գործնական հնարավորություն չկար իրականացնելու Անկյուրիայի ժողովականների բուռն ցանկությունը՝ «համերաշխության հասնել եկեղեցական միջոցով»**:

IV դարի 50-ականների երկրորդ կեսին պետություն-եկեղեցի փոխհարաբերության ձեւավորված պրակտիկան եւ դրա զարգացման միտումները հաստատում են, որ «այն ժամանակները, երբ եկեղեցին սեփական միջոցներով կարող էր հաղթահարել ներքին դժվարությունները, նրա համար անվերադարձ անցել էին»[24]: Պատմական այդ ժամանակահատվածի երրորդաբանական վիճաբանությունների դինամիկան աներկբա վկայում է, որ առանց կայսերական իշխանության աջակցության եւ հավանության անհնարին էր դոգմատիկ բնույթի ցանկացած հարց լուծել: Այդ իսկ պատճառով նորահռչակ համանմանական երրորդաբանության կողմնակիցներն անոմեականության ու եւնոմեականության դեմ պայքարում կայսերական իշխանության աջակցությունը ձեռք բերելու նպատակով Բարսեղ Անկյուրիացուն, Եւստաթեոս Սեբաստացուն, Էլեւսիոս Կիզիկիացուն եւ Ղեւոնդիոս քահանային օժտեցին համապատասխան լիազորություններով՝ Կոստանցիուսի մոտ «եկեղեցական անդորրը խանգարող անոմեականների վարքը բողոքարկելու համար»[25]:

Եկեղեցական մատենագրությունը փաստում է, որ, տեղեկանալով անոմեականների քարոզչության հետեւանքով հրապարակ իջած հավատքային հակամարտության մասին[26], Կոստանցիուս կայսրը եկեղեցական նոր պառակտումների հնարավոր ալիքը կասեցնելու նպատակով կարգադրել է վիճահարույց հարցերը քննարկելու համար Սիրմիումում եպիսկոպոսական ժողով հրավիրել: Քննարկումների արդյունքում հրապարակ իջավ դավանաբանական նոր բանաձեւ, որը եկեղեցական պատմությանը հայտնի է **Սիրմիումի դավանաբանական 3-րդ բանաձեւ** (սիրմիումական դավանանք) անվամբ[27]: Վավերագրերը վկայում են, որ դավանաբանական այդ փաստաթղթին յուրահատուկ համադրական դեր էր վերապահված, քանի որ այն **հանդես եկավ Անկյուրիայի ժողովի պաշտպանության դիրքերից**: Նույնը, սակայն, չի կարելի պնդել դավանագրի հավատքային ուղղվածության

24 Անդ, էջ 383:

25 Մանրամասները տե՛ս **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, էջ 250:

26 Սոզոմենոս պատմիչը հավաստում է, որ Մաքսենցիուսի ապստամբությունը ճնշելուց հետո (350 թ.) Կոստանցիուսն անփոփոխ կերպով գտնվում էր Արեւմուտքում՝ Սիրմիումում եւ ոչինչ չգիտեր անոմեականության կողմից եկեղեցական պրակտիկա իջած պառակտումների մասին: Պատմիչը դա բացատրում է նրանով, որ պալատական եպիսկոպոսները ոչ միայն կայսրին հավատիացրել էին, թե Արեւելքում եկեղեցական խաղաղություն է տիրում, այլեւ նրան կարողացել էին գրամադրել հօգուտ անոմեականների: Այդ իսկ պատճառով Կոստանցիուսն անձնական ուղերձ էր պատրաստել անտիոքյան անոմեականների համար, եւ կայսերական դեսպանը պատրաստվում էր ճանապարհ ընկնել, երբ անկյուրիական պատգամավորները հասան Սիրմիում, տե՛ս **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, էջ 250:

27 Տե՛ս անդ: Արդի ատրվածաբանական գրականության մեջ հաստատվում է, թե «սիրմիումական դավանագիրը Հայր եւ Որդի Աստծու էապես նման լինելու (այլ ոչ համագոյության)» մասին 357 թ. Սիրմիումի երրորդ ժողովում կիսաարիոսականների հռչակած դավանագիրն է, տե՛ս "Христианство: Энциклопедический словарь". Т. II, М., 1995, էջ 583: Այս տեսակետն էական ճշգրտումների կարիք ունի: Քանի որ Սիրմիումի 3-րդ բանաձեւը եղել է Անկյուրիայի 358 թ. ժողովի դավանաբանական գործունեության գրամաբանական շարունակությունը, ապա ինքնին հասկանալի է, որ Սիրմիումում անցկացված եպիսկոպոսական երրորդ ժողովը չէր կարող թվագրվել 357 թվականով: Եւ երկրորդ, թեեւ **Եպիփան Կիպրացին անկյուրիական հայրերին անվանում է կիսաարիոսականներ**, սակայն, ինչպես իրավամբ նկատում է Ա. Կարպաշեւը, «դա պատմականորեն ճշմարիտ չէ, քանի որ նրանք (անկյուրիական հայրերը - **Ա. Ք.**) լիովին գարանջատվել էին արիոսականներից. տե՛ս **В. А. Карташев.** Вселенские соборы. М., 2002, էջ 85:

մասին, քանի որ իր բովանդակությամբ այն կանգ առավ ուղղադավանության կիսաճանապարհին: Բանն այն է, որ, չնայած արտաքին ընդհանրություններին, անկյուրիական հայրերի ցանկությանը համահունչ դավանագիրը վերարտադրում էր Անտիոքի 341 թ. դավանաբանական 2-րդ բանաձևն այն հավելումով միայն, որ «Որդի Աստված ըստ ամենայնի նման է Հայր Աստծուն»[28]:

Կոստանցիուս կայսրն անտիոքացիներից պահանջեց ընդունել երրորդաբանական այդ դավանագիրը, հակառակ դեպքում նրանք կամ կզրկվեին եկեղեցական հավաքներին ու ժողովներին մասնակցելու իրավունքից, կամ էլ հարկադրաբար պետք է հեռանային եկեղեցուց[29]: Այդ ամենը ոչ միայն թույլ են տալիս արձանագրել, որ Սիրմիումի հակաերրորդաբանական 2-րդ բանաձևի ընդունումից կարճ ժամանակ անց **հերթական անգամ եկեղեցուն պարտադրվեց հավատքային նոր բանաձև՝ համանմանական երրորդաբանությունը**, այլև՝ լրացուցիչ մեկ անգամ ևս պատմությանն ի ցույց դրվեց **եկեղեցական պրակտիկայում բազմիցս վերարտադրված այն իրողությունը, որ քաղաքական իշխանության օժանդակությամբ հավատքային վիճաբանական հարցերը լուծելու փորձերն արդյունավետ չեն**:

Վավերագրերը փաստում են, որ համանմանականները կայսեր պահանջն իրագործեցին բռնություններով և հալածանքներով[30]: Այդ ամենը եկեղեցում բողոքի ալիք բարձրացրեց և, եկեղեցական անդորրը պահպանելու միտումով, Կոստանցիուս կայսրն աքսորված անոմեականներին թույլ տվեց եկեղեցի վերադառնալ[31]: Եւ քաջ գիտակցելով, որ հերթական անգամ վտանգվում է եկեղեցական փխրուն խաղաղությունը, **կայսրը հարկադրված էր վիճաբանական հարցը լուծելու ուղիներ որոնել** և այդ գործում նա հենվեց **եկեղեցական մեծամասնության հավատքային կողմնորոշումների** վրա:

Ցավոք, չափազանց դարամետ էր նաև հավատքային հարաբերությունների զարգացման դինամիկան: Չնայած հաշտեցման շարունակական փորձերին՝ **ամենայն սրությամբ շարունակվում էր քրիստոնեական արևելքի և արևմուտքի դոգմատիկ հակամարտությունը**: Իր հերթին, **քրիստոնեական արևելքը պառակտված էր դոգմատիկ մի քանի անհաշտ հոսանքների** (նիկեականներ, արևելյան պահպանողական երրորդաբանության զանազան հոսանքներ, էբիոնական ուղղվածության անոմեականներ, համանմանականներ, եւնոմիականներ և այլն), որոնց միջև ծավալված անզիջում պայքարն անհնար էր դարձրել «հավասարակշռված հավատքային համերաշխություն» հաստատելու ցանկացած փորձ: Այդ իրավիճակի ձևավորմանը մեծապես նպաստել էր նաև այն, որ կայ-

28 Տե՛ս **Филосторгий.** Церковная история, кн. IV, гл.8, էջ 359. **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, էջ 253:

29 Տե՛ս **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, էջ 251-252: Սոզոմենոսի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Սիրմիումի դավանաբանական 3-րդ բանաձևն իրենց ստորագրությամբ վավերացրել են նաև Հռոմի Լիբերիոս եպիսկոպոսը, Հոզիա Կորդուբացին և աֆրիկյան (կարթագենյան) բազմաթիվ եպիսկոպոսներ, տե՛ս անդ, էջ 253:

30 Փիլոստորգիոսի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ համանմանականների պահանջով Անտիոքի եպիսկոպոս Եւդոկսիոսն աքսորվեց Հայաստան, Կիզիկիայի եպիսկոպոս Եւնոմիոսը՝ Մայում, Աեցիոսը՝ Դեպուզա: Եւս 70 անոմեականներ աքսորվեցին կայսրության այլ հատվածներ: Մանրամասները տե՛ս **Филосторгий.** Церковная история, էջ 359:

31 Տե՛ս անդ, էջ 360:

սեր կողմից համանմանակաների հովանավորության հետեւանքով աննախադեպ թուլացել էր հականիկեականության պարագլուխների՝ Ուրզակի Սինգիդոնացու, Վաղես Մուրսիացու, Ակակիոս Կեսարացու եւ «պալատական» այլ եպիսկոպոսների ազդեցությունը: Այդ ամենը համահավաք կերպով Կոստանցիուսին հարկադրեցին որոնել այն «ոսկե միջինը», որն առավել ընդունելի կլիներ հոգեւոր դասի կողմից եւ պետության անվտանգության հիմնահարցերի լուծման գործընթացում հաշվի կառներ **եկեղեցական գործոնը**: Եւ, քանի որ կայսրն առաջնորդվում էր համապետական շահերով, **հրաժարվեց ուղղակի միջամտության եւ հարկադրանքների կրոնական նախկին քաղաքականությունից եւ որոշեց վիճաբանական հիմնահարցը լուծել եկեղեցու «ընդհանրական» ջանքերով**:

Այդպես ձեւավորվեց նոր տիեզերական ժողով հրավիրելու գաղափարը: Այն պրակտիկ կերպով իրագործելու մի քանի անհաջող փորձերից հետո, Կոստանցիուսը, վիճաբանական հավատքային հարցերը քննարկելու համար, արեւմտյան եպիսկոպոսներին հրամայեց ժողով անցկացնել Իտալիայի հյուսիս-արեւելքում գտնվող Արիմինում (Արիմին, Ռիմինի) քաղաքում, իսկ արեւելյան եպիսկոպոսներին՝ Իսավրական Սելեւկիայում[32]: Բայց «պալատական եպիսկոպոսները»[33] բավականին խորամանկ պլան մշակելով առաջարկեցին երկարատեւ ու «անպտուղ քննարկումների» փոխարեն արքունիք հրավիրել դոգմատիկ հոսանքների ներկայացուցիչներին եւ կայսեր ներկայությամբ համախումբ քննարկել հավատքային բոլոր վիճաբանական հարցերը[34]:

Հականիկեականների այդ քայլը, միաժամանակ, բավական հեռուն գնացող նպատակներ էր հետապնդում: Ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ արեւմտյան եպիսկոպոսներից ոմանք պաշտպանում էին Աթանաս Ալեքսանդրացու ջանքերով արեւմուտքում սերմանված ուղղադավան երրորդաբանությունը: Չափազանց ակնհայտ էր նաեւ, որ հավատքի հարցերում արեւելյան համանմանակաները նույնպես զգալիորեն մերձեցան նիկեական երրորդաբանությանը: Հականիկեական երրորդաբանության պարագլուխների համար բնաւ դժվար չէր կռահել, թե քննարկումների բնականոն ծավալման պարագայում ինչպես արեւմուտքում, այնպես էլ արեւելքում հավատքային ինչ սկզբունքեր կարող էին հոչակվել: **Ընդդիմության պարագլուխները քաջ գիտակցում էին նաեւ, որ նիկեականության եւ նրան**

32 Եկեղեցական պատմագրությունը հաղորդում է, որ Կոստանցիուսի հրամանով նախատեսվում էր «տիեզերաժողով» հրավիրել Նիկոմեդիայում, որի աշխատանքներին մասնակցելու հրավեր էին ստացել բոլոր այն եպիսկոպոսները, որոնք «իրենց խելքով եւ կարողություններով կարող էին պատասխան տալ սեփական հոգեւոր բնագավառների համար»: Սակայն երկրաշարժի հետեւանքով Նիկոմեդիան հիմնահատակ կործանվեց, եւ խորհրդակցելով Բասեղ Անկյուրիացու հետ, Կոստանցիուսը որոշեց ժողովն անցկացնել Նիկեայում, որ հրավիրվեցին բոլոր առողջ եպիսկոպոսները (իսկ վատառողջ եւ տկար եպիսկոպոսներն իրենց փոխարեն ժողով պետք է ուղարկեին նվիրակների՝ քահանաների կամ սարկավագների): Ընդ որում, կայսեր նոր հրամանի համաձայն, ժողովական քննարկումներն ավարտելուց հետո Արեւելքի եւ Արեւմուտքի եպիսկոպոսների 10-ական նվիրակներ պետք է ներկայանային արքունիք՝ «ընդունված հավատքի բանաձեւերի ուղղադավանությունն ստուգելու համար». մանրամասները տե՛ս **Филосторгий.** Церковная история, էջ 360. **Сократ Схоластик**. Церковная история, էջ 105-106. **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, էջ 215-216 եւ այլն:

33 Եկեղեցական մատենագրությունը «պալատական եպիսկոպոսների» թվում հիշատակում է ժամանակի հականիկեական ընդդիմության առաջնորդներին՝ եպիսկոպոսներ Ուրզակի Սինգիդոնացուն, Վաղես Մուրսիացուն, Գեորգ Ալեքսանդրացուն, Ակակիոս Կեսարացուն, Մարիս Քաղկեդոնացուն, Մարկոս Արեթուզացուն եւ աքսորից վերադարձած անոմեականների ջերմեռանդ պաշտպան Եղոքսիոս Անտիոքացուն:

34 Տե՛ս **Филосторгий.** Церковная история, էջ 360:

էապես մերձեցող համանմանականության դաշինքով ուրվագծվող եկեղեցական միությունը կնշանավորեր իրենց կարիերայի ավարտը, մի բան, որի կասեցման համար նրանք պատրաստ էին ամեն ինչի: Ահա այդ միության եւ հավատքային համերաշխության կասեցմանն էր միտված նրանց կողմից թելադրված «քննարկումների» պահանջը: Այլ կերպ ասած՝ դա այն միակ ճանապարհն էր, որը կարող էր նախկինի նման հավատքի հարցերի ղեկավարությունը կենտրոնացնել իրենց ձեռքում:

«Համերաշխության» ծրագիրը արժանացավ նաեւ Կոստանցիուս կայսեր հավանությանը, որը, նրանց ազդեցությամբ, արդեն հակվել էր այն մտքին, թե համանմանության վարդապետությունն ի զորու չէ դառնալու համաեկեղեցական հավատքային բանաձեւ: Եւ բնական էր, որ Սիրմիումի կայսերական պալատում սկսված դոգմատիկ քննարկումներում համանմանականները հարկադրված նահանջեցին սեփական համոզմունքներից: Արդյունքում **փոխադարձ համաձայնությամբ որոշվեց «էապես նման»** (ὅμοιος ?ατ՝ ο??ιά?) **երրորդաբանական եզրը փոխարինել «ըստ ամենայնի նման»** (ὅμοιο? ?ατὰ πάντα) **եզրով**[35]: Այնուհետեւ Մարկոս Արեթուզացուն հանձնարարվեց փոխհամաձայնության ոգով նոր դավանագիր կազմել եւ, երբ 359 թ. Հոգեգալստյան տոնի նախօրեին եպիսկոպոսը պահանջվող հավատքային փաստաթղթի նախագիծը քննարկման ներկայացրեց, եպիսկոպոսները հերթական անգամ հրավիրվեցին կայսեր մոտ: Այդպես հրապարակ իջավ մի նոր դավանագիր՝ Սիրմիումի 4-րդ բանաձեւը, որը պատմությանը հայտնի է **«թվագրված հավատ»**[36] անվամբ:

«Թվագրված հավատը» պետք է դասել համադրական դավանագրերի շարքին: Նրա հիմքում ընկած էր անտիոքյան (պահպանողական) նշանավոր «Ղուկիանոսի հանգանակը», որը լրացվեց համանմանական երրորդաբանության որոշ հիմնադրույթներով: Դավանագիրը հռչակում էր. «Հավատում ենք միակ ու ճշմարիտ Հայր Աստված-Ամենակալին՝ ամենայնի Արարչին: Եւ Աստծու Միածին Միակ Որդուն, որը բոլոր դարերից եւ ամեն մի սկզբից, պատկերացվող բոլոր ժամանակներից եւ ամեն մի մտային էությունից առաջ անկիրք կերպով ծնված է Աստծուց: Միածին ծնվածին, Միակին՝ Միակ Հայր Աստծուց, Աստծուն՝ Աստծուց, ըստ սուրբ գրոց **իրեն ծնող Հորը նմանին**, որի ծննդյան մասին ոչ ոք ոչինչ չգիտի, բացի Նրան ծնող Հորից: Մենք գիտենք, որ Նրա Միածին այս Որդին Հոր Մտայնության համաձայն ուղարկվել է Նրա կողմից, Նա իջավ երկնքից եւ Հոր կամքի

35 Այս պարագայում «ըստ ամենայնի նման» եզրը լիովին բավարարում էր ընդդիմադիր հականիկեական երրորդաբանության ներկայացուցիչներին, որովհետեւ նրանք Հայր եւ Որդի Աստծու «ըստ ամենայնի նմանությունը» մեկնաբանում էին իբրեւ նմանություն ամեն ինչում, **բացառությամբ՝ էական նմանության**:

36 Եկեղեցական մատենագրությունը փաստեր է պահպանել այն մասին, որ «ըստ ամենայնի նման» եզրի շուրջ աստվածաբանական վիճաբանություններ եւ հակասություններ առաջացան արդեն դավանագիրն ստորագրելու պահին: Վաղես Մուրսիացին դավանագիրը վավերացրեց «Որդին նման է Հորը» բանաձեւումով, հրաժարվելով ճանաչել «ըստ ամենայնի նման» բանաձեւումը: Այդ իսկ պատճառով Կոստանցիուսը հարկադրեց Վաղեսին «վերանայել եւ ճշգրտել սխալը»: Ինչ վերաբերում է Բասեղ Անկյուրիացուն, ապա նա դավանագիրն ստորագրեց հետեւյալ հավելումով. «դավանում եմ ըստ ամենայնի Հորը նման Որդուն, **ըստ ամենայնի**, այսինքն՝ ոչ միայն ցանկությամբ, այլեւ՝ առանձնավորությամբ (*ὑποστασις*-ով), եւ՝ գոյությամբ եւ՝ կեցությամբ, իսկ եթե որեւէ մեկը նրան դավանում է իբրեւ ինչ-որ հարկանիշներով նման, ապա նրան համարում եմ կաթողիկե եկեղեցուն օտար»: Մանրամասները տե՛ս **S. P. N. Epiphanii** Adversus Octoginta haereses / **Migne J.-P.**, **PG**, T. XLII, Lib. III, T. I (haer. LXX-LXXVI: Contra Audianos, Photinianos, Semiarianos, Pneumatomachos, Aerium, Anomoeos). Haeres LXXIII, col. 14-15. **Hilarii**. Fragment XV / **Migne J. P.**, **PL**, Acc. s., t. X, էջ 720-721 եւ այլն:

համաձայն իրականացրեց ողջ տնաշինություն: Հավատում ենք եւ Սուրբ Հոգուն: Եւ, քանի որ Հայրերի կողմից պարզությամբ ներմուծված եւ ժողովրդի համար անհայտ «համագոյ» եզրը գայթակղություն է ծնում, որովհետեւ Ս. Գրքում այն չի հանդիպում, ապա ցանկալի է այն չօգտագործել, եւ ապագայում եւս համագոյ բառը Հայր Աստծու նկատմամբ չկիրառել, քանի որ Սուրբ Գիրքը ոչ մի տեղ չի հիշատակում Հոր եւ Որդու համագոյության մասին: Հայր Աստծու, Որդու եւ Սուրբ Հոգու նկատմամբ չպետք է օգտագործել նաեւ «առանձնավորություն» (*υποστασις*) եզրը: **Իսկ Որդուն մենք անվանում ենք ըստ ամենայնի նման Հորը**, ինչպես ասում եւ սովորեցնում է Սուրբ Գիրքը: Իսկ բոլոր հերետիկոսությունները, ինչպես նրանք, որոնք արդեն դատապարտվել են անցյալում, այնպես էլ նրանք, որոնք կարող են ձեւավորվել իբրեւ հակադրություն այս փաստաթղթում շարադրված հավատին՝ նզովյալ լինեն»[37]:

Նոր դավանագիրն արժանացավ նաեւ կայսեր հավանությանը եւ վավերացումից հետո ուղարկվեց Արիմինիումի եւ Իսավրական Սելեւկիայի ժողովների հաստատմանը:

Եկեղեցական մատենագրության տեղեկություններից դատելով՝ Արիմինիումի ժողովական քննարկումների ընթացքում արեւմտյան 400 եպիսկոպոսների[38] բացարձակ մեծամասնությունը, շուրջ 320-ը, նախապես հանդես են եկել նիկեականության պաշտպանության դիրքերից: Սակայն Տավրուս պրեֆեկտը, հետեւելով կայսեր ցուցումներին, նրանց արգելել է ժողովից հեռանալ, քանի դեռ չէին ընդունել «պալատական» դավանագիրը: Ընդդիմադիր եպիսկոպոսները մերժել են այդ պահանջը[39] եւ, իրադարձությունների հետագա սրումը կանխարգելելու միտումով, Կոստանցիուս կայսրը նրանց առաջարկել է «հավատի հարցում համերաշխության գալ», **վավերացնել համապատասխան որոշումով եւ ժողովական 10 նվիրակների հետ այդ որոշումն ուղարկել իրեն**: Շուտով Արիմինիում եկան նաեւ Ուրգակին եւ Վաղեսը եւ առաջարկեցին ոչ թե քննարկումներ ծավալել, այլ պարզապես իրենց ստորագրությամբ վավերացնել արդեն իսկ հաստատված դավանաբանական բանաձեւը: Եւ դարձյալ կատարվեց այն, ինչին հանդիպում ենք Արեւատի 353 թ. եւ Միլանի 355 թ. ժողովներում: **Արիմինիումի ժողովը պառակտվեց** երկու թեւի: Մեծամասնություն կազմող թեւը մերժեց սիրմիումական դավանագիրը եւ «վավերացրեց իր հավատամքը» (որի մասին, ի դեպ, ոչ մի տեղեկություն չի պահպանվել): Իսկ Ուրգակին եւ Վաղեսը, համակիր 80 եպիսկոպոսների հետ առանձնանալով, մեկ այլ ժողով գումարեցին, որը վավերական ճանաչեց սիրմիումական դավանագիրը: Դրանից հետո երկու ժողովներն էլ, 10-ական եպիսկոպոսների հետ, հաստատված դավանագրերն ուղարկեցին Կ. Պոլիս՝ Արեւելք տեղափոխված Կոստանցիուս կայսեր մոտ[40]:

---

37 Տե՛ս **Свт. Афанасий Великий.** Посланіе о соборахъ, бывшихъ въ Ариминъ италійскомъ и въ Селевкіи исаврійском / Творения в четырех томах. Т. III, М., 1994, էջ 99-100. **Сократ Схоластик**. Церковная история, էջ 107 (ընդգծումները մերն են - **Ա. Ք.**):

38 Ժողովականների թվաքանակի մասին տե՛ս **Свт. Афанасий Великий.** Посланіе о соборахъ, бывшихъ въ Ариминъ италійскомъ и въ Селевкіи исаврійском, էջ 98:

39 Մանրամասները տե՛ս **Свт. Афанасий Великий.** Посланіе о соборахъ, бывшихъ въ Ариминъ италійскомъ и въ Селевкіи исаврійском, гл, էջ Гс-101.**Сократ Схоластик**. Церковная история, էջ 108.**Созомен Эрмий Саламинский**.Церковная история, էջ 262-263:

40 Այդ ամենի մասին մանրամասները տե՛ս **Сократ Схоластик**.Церковная история, էջ 112-113.**Созомен Эрмий Саламинский**.Церковная история, էջ 265.**Hilarii**.Fragment VII / **Migne J. P., PL**, Acc. s., t.X, էջ

Կ. Պոլսում երկու հոսանքների նվիրակներն այդպես էլ ընդունելության չարժանացան կայսեր կողմից: Սոզոմենոսը դա բացատրում է Ուրգակիի եւ Վաղեսի նոր դավերով եւ պնդում է, թե Կոստանցիուսը նվիրակներին կարգադրեց անցնել Ադրիանուպոլիս եւ սպասել: Սոկրատես պատմիչը հավելում է նաեւ, որ արեւմտյան «անփորձ» պատգամավորներին տեղափոխեցին թրակիական Նիկ քաղաք, որտեղ էլ Ուրգակին եւ Վաղեսը, «խաբեությամբ, ճնշումներով եւ համոզելով» կարողացան նրանց ստիպել ստորագրելու **սիրմիումական դավանագրի ոգուն համահունչ դավանաբանական բանաձեւ, որն արձանագրում էր Հայր եւ Որդի Աստծու սոսկական նմանությունը**[41]: Այդ հաղթանակից հետո՝ հականիկեականության պարագլուխները պատգամավորների հետ վերադարձան Արիմինիում՝ նպատակ ունենալով Նիկի բանաձեւը վավերացնել ողջ ժողովի անունից:

Սուլպենցիուս Սեւերոսը վստահեցնում է, որ նրանք այդ գործին են ծառայեցրել նաեւ ժողովականներին ուղղված Կոստանցիուսի նամակը, որը **եպիսկոպոսներից պահանջում էր վավերացնել Նիկի դավանագիրը, իսկ պրեֆեկտին հրահանգում էր ցանկալի արդյունքի համար բռնությունների դիմել՝ հարկ եղած դեպքում աքսորելով մինչեւ 50 եպիսկոպոսի**[42]: Եւ, որքան էլ տարօրինակ է, արեւմտյան եպիսկոպոսներն, այս պարագայում եւս, բավական հեշտությամբ զիջեցին իրենց վերագրված «նիկեական ջատագովի» դերը եւ **վավերացրեցին Նիկի դավանագիրը**[43]:

Բոլոր հիմքերն ունենք պնդելու, որ արեւմտյան եպիսկոպոսների «անկման» պատճառը եղել ոչ թե հավանական հալածանքները կամ բռնությունը, այլ հավատքային գործոնը: Այն

695, 697. **Sulpitius Severus**, History, lib. II, cap. 43, էջ 94:

41 Սիրմիումական դավանագիրը կրկնող հավատքային այդ բանաձեւը եկեղեցական պատմությանը հայտի է **Նիկի դավանագիր** անվամբ: Եկեղեցական պատմիչները պնդում են, որ Ադրիանուպոլսի արվարձան Նիկ բնակավայրը պատահական չէր ընտրված, որ Ուրգակին եւ Վաղեսը, ժողովի համար այդ փոքրիկ քաղաքն ընտրելով, փորձում էին «Նիկի» եւ «Նիկեայի» բավականին մերձ իմաստներն օգտագործել «անտեղյակ մարդկանց թյուրիմացության մեջ գցելու համար», տե՛ս **Сократ Схоластик**. Церковная история, էջ 113. **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, էջ 272. **Феодорит еписк. Кирский.** Церковная история. СПб., 1852, кн.II, гл, 27, էջ 161-163:

42 Մանրամասները տե՛ս **Sulpitius Severus**, History, lib. II, cap. 43, էջ 96: Բնագրային վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ արեւմտյան եկեղեցու մատենագիրները Արիմինիումի ժողովում ծավալված հետագա իրադարձությունների ընթացքը ձգտում են ներկայացնել բավական գունեղ: Մասնավորապես, առանց որեւէ փաստական հիմնավորման, նրանք պնդում են, թե ժողովը նախապես պատվիրակներին ընդունեց թշնամաբար եւ, անգամ, ցանկանում էր խզել նրանց հետ ունեցած բոլոր հարաբերությունները: Բայց կարճ ժամանակ անց, ոչ միայն հրաժարվեց այդ մտքից, այլեւ՝ ապտիճանաբար կորցրեց իր զգոնությունը: Եւ որ, իբր յոթնամսյա տառապանքներից հոգնած ժողովականները հավաքական ճնշումների արդյունքում զիջեցին եւ բավարարեցին բոլոր պահանջները, տե՛ս **Rufinus.** Historia Ecclesiastica / **Migne J. P. PL**, T. XXI, Acc. s., lib. I, p. 494; **Sulpitius Severus**. History, lib. II, ,cap. 43, էջ 96:

43 Սոկրատես պատմիչը պնդում է, որ «Ուրգակիի հետևորդները Իտալիայից հեռանալով ժամանեցին արեւելյան մարզեր եւ հաստատվեցին Նիկ անունով թրակիական քաղաքում: Որոշ ժամանակ գտնվելով այդտեղ, նրանք ժողով գումարեցին եւ հունարեն թարգմանելով ... Արիմինի դավանագիրը, հաստատեցին այն եւ փիեզերական ժողովի անունից հռչակեցին «Նիկում շարադրված դավանագիր» անվամբ». **Сократ Схоластик**. Церковная история, էջ 113: Սոզոմենոսը, հակառակը, վստահեցնում է, թե Արիմինիումի ժողովը վավերական ճանաչեց Նիկի դավանագիրը, տե՛ս **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, кн. IV, гл. 19, с. 272): Իսկ Թեոդորետը «Նիկի ոչ ճշմարիտ հավատամքի» հաստատման պատմությունը ներկայացնում է այլ կերպ: Նա գրում է, թե արիոսականները եպիսկոպոսների (Արիմինիումի ժողովի - **Ա. Ք.**) մեծ մասին, հակառակ իրենց կամքի, տեղափոխեցին Նիկ քաղաք, որտեղ նրանց համոզեցին հավատամքից դուրս հանել **էություն** եւ **համագոյություն** եզրերը եւ դրանց փոխարեն օգտագործել **նմանություն** եզրը, տե՛ս **Феодорит еписк. Кирский.** Церковная история, էջ 161:

փաստը, որ առաջարկվող գործարքին արեւմտյան 400 եպիսկոպոսներից տուրք են տվել 380-ը, արդեն պերճախոս վկայում է այն մասին, որ **քրիստոնեական արեւմուտքի հավատքային գործունեության ոլորտում փիրապետել են հակասական միտումներ**: Այդ եզրահանգումը կարելի է փաստել այլ օրինակով եւս: Արեւմտյան մատենագրությունը տեղեկություններ է հաղորդում եւ այն մասին, որ նիկեականությանը հավատարիմ 20 եպիսկոպոսները եւս ուղղադավան համարելով, վավերացրել են նմանության դավանագիրը, մոռանալով, որ Հայր եւ Որդի Աստծո սոսկական նմանությունն ինտուիտիվ կերպով իր մեջ կարող է բովանդակել նաեւ նրանց տարբերությունը (անգամ՝ էական) [44]: Այդ ամենը թույլ են տալիս պնդել, որ IV դարի 50-ականների երրորդաբանական վիճաբանությունների ընթացքում Արեւմտյան եկեղեցին առանցքային ոչ մի հարցում չի կարողացել պաշտպան կանգնել ուղղադավությանը եւ հավատքային հիմնարար նշանակություն ունեցող գրեթե բոլոր հարցերում, ներքին (հականիկեական ընդդիմության երրորդաբանական զանազան լուծումներ) եւ արտաքին (կայսերական իշխանության կրոնական քաղաքականություն) գործոնների ազդեցությամբ պաշտպանել է հակաերրորդաբանական հավատքային լուծումները:

Երրորդաբանական դոգմատիկ հարցերի նկատմամբ անսկզբունքայնության դասական օրինակ կարելի է համարել նաեւ բուռն իրադարձություններով հագեցած արեւելյան եպիսկոպոսների **359 թ. Իսավրական Սելեւկիայի ժողովը**[45]:

Վավերագրերի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ արեւելյան ասպվածաբանական խմբավորումները ժողովի էին ներկայացել **ոչ միայն սեփական հավատքային բացառիկությունը հիմնավորելու, այլեւ՝ «հակառակորդ» խմբավորման հետ «հաշիվները մաքրելու» մտադրությամբ** եւ ոչ մի փոխզիջման պատրաստ չէին: Եկեղեցական պատմագրությունը վկայում է, որ «պալատական եպիսկոպոսներն» արեւելյան ասպվածաբան-նվիրապետների համար միանգամայն այլ սցենար էին նախապատրաստել: Վերջինիս պրակտիկ իրագործումը պետք է համարել Ակակիոս Կեսարացու բացման խոսքը, որն իր կողմնակիցների անունից առաջարկեց հավատքային վիճաբանական հարցերը համահարթելու նպատակով մեկընդմիշտ «ոչնչացնել» Նիկեական հանգանակը, մերժել Հայր եւ Որդի Աստծու նմանությանը վերաբերող ցանկացած վարդապետություն եւ նոր դավանագիր հաստատել այն մասին, թե Աստվածային էությունը չի կարող որեւէ նմանություն ունենալ եւ, որ Քրիստոսն արարված է ոչնչից[46]: Համանմանականները, կտրուկ հակադրվելով արմա-

44 Տես **Сократ Схоластик**.Церковная история, էջ 113:

45 Այս ժողովին մասնակցել է 160 (ըստ Աթանաս Մեծի եւ Սոկրատեսի) եպիսկոպոս: Դրանց ճնշող մեծամասնությունը (105-ը) եղել են համանմանականներ, որոնց ճանաչված առաջնորդներն էին Գեորգ Լաոդիկեցին, Բասեղ Անկյուրիացին, Եւստաթեոս Սեբաստացին, Էլեվսիոս Կիզիկիացին եւ Մակեդոնիոս Կոստանդնուպոլսեցին: Հականիկեական ընդդիմության ծայրահեղ թեւի՝ Ակակիոս Կեսարացու կողմնակիցներ են եղել 30-40 (ըստ Եպիփան Կիպրացու՝ 26, ըստ Սոկրատես պատմիչի՝ 36) եպիսկոպոսներ: Իսկ Աթանաս Ալեքսանդրացու եւ Վիլարիոս Պուատիեցու գլխավորած նիկեական եպիսկոպոսները բացարձակ փոքրամասնություն են կազմել: Ժողովականների թվից դատելով կարելի է ենթադրել, որ արեւելյան ոչ բոլոր եպիսկոպոսներն են հրավիրվել քննարկումների: Ժողովի հրավիրման եւ կազմի մասին մանրամասները տե՛ս **Свт. Афанасий Великий.** Посланіе о соборахъ, бывшихъ въ Ариминѣ италійскомъ и въ Селевкіи исаврійском, էջ 105. **Сократ Схоластик**. Церковная история, էջ 117. **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, էջ 262. **Hilarii**. Contra Constant Imper / **Migne J. P., PL**, Acc. s., t. X, էջ 591. **P. N. Epiphanii** Adversus Octoginta haereses / **Migne J.-P., PG**, T. XLII, Lib. III, T. I (haer. LXX-LXXVI: Contra Audianos, Photinianos, Semiarianos, Pneumatomachos, Aerium, Anomoeos). Haeres LXXIII, col. 14-15:

46 Տե՛ս **Сократ Схоластик**.Церковная история, էջ 118-119.**Созомен Эрмий Саламинский**.Церковная

տական հակաերրորդաբանական այդ պահանջին՝ հռչակեցին, որ **Որդի Ասված Հայր Աստծու էությունից է**: Հավատքային էական նշանակություն ունեցող այդ հարցի շուրջ վիճաբանությունները համահարթելու բոլոր փորձերը տապալվեցին, եւ ժողովը պառակտվեց երկու հակադիր հոսանքների:

Ակակիոսականների դեմ ըմբոստացած եպիսկոպոսներն առանձին քննարկում կազմակերպելով, առաջարկեցին վերահաստատել Ղուկիանոսի հանգանակը՝ Հայր եւ Որդի Աստծու «էապես նմանության» հավելումով: Արմատական հակաերրորդաբանները քաջ գիտակցելով, որ կանգնած են շնորհազրկման եզրին, բավական խորամանկ քայլի դիմեցին եւ դատապարտեցին անոմեականությունը: Իսկ այն բանից հետո, երբ սրացվեց Սիրմիումի 4-րդ բանաձեւը, կոմիտ Լեոնան միացյալ նիստ հրավիրեց, որտեղ ընթերցվեց ակակիոսականների ներկայացրած դավանաբանական նոր փաստաթուղթը, որը բանադրում էր անոմեականությունը եւ ընդունելի համարում **Հայր եւ Որդի Աստծու նմանությունն ըստ կամքի**[47]: Այն, որ ակակիոսական դավանագիրը միտված էր ինչպես նիկեականության, այնպես էլ անտիոքյան դավանագրի («Ղուկիանոսի հանգանակ») դեմ՝ պարզ երեւում է Ակակիոս Կեսարացու հետեւյալ խոսքերից. «եթե նիկեական դավանանքը փոխվել է մեկ անգամ, իսկ հետո՝ նաեւ բազում անգամներ, ապա ներկայումս էլ ոչինչ չի խանգարում նորը հրապարակելու համար»[48]:

Այդ իսկ պատճառով համանմանականներն առանձին նիստ հրավիրեցին, դատապարտեցին ակակիոսական դավանագիրը, բանադրեցին շարժման առավել գործուն 9 եպիսկոպոսների, եւս 9-ին՝ զրկեցին եկեղեցական հաղորդությունից[49]: Վերջիններս բողոքեցին Կոստանցիուս կայսրին: Վիճաբանական հարցը հարթելու միտումով Կ. Պոլիս հրավիրվեցին մի խումբ համանմանականներ[50], որոնք կայսեր ներկայությամբ պետք է բանավեճ սկսեին ակակիոսականների հետ: Այդպես պետք է վճռվեր գլխավոր հարցը՝ այն, թե դոգմատիկ ո՞ր

история, էջ 278.**Свт. Афанасий Великий.** Посланіе о соборахъ, бывшихъ въ Ариминъ италійскомъ и въ Селевкіи исаврійском, էջ 12: .

47 Ակակիոս Կեսարացու կազմած դավանագիրը հավաստում էր, որ իրենք (ակակիոսականները - **Ա. Ք.**) չեն մերժում Անտիոքում հաստատված իրական հավատամքը (Ղուկիանոսի հանգանակ) եւ դրան են նախապատվություն տալիս: Բայց քանի որ «համագոյ» եւ «համանման բառերը բոլոր ժամանակներում, ինչպես եւ այսօր վրդովել են շատերին, իսկ վերջերս ոմանք նույնիսկ հայտնագործել են նոր արտահայտություն՝ Հայր եւ Որդի Աստծու «անհամապատասխանություն» (= անոմեականություն - **Ա. Ք.**), ապա մենք իբրեւ Ս. Գրքին չպատկանող մերժում ենք եւ՛ համագոյությունը եւ՛ համանմանությունը, իսկ «չհամապատասխանող» բառը եւ բոլոր նրանց (= Աեցիոս - **Ա. Ք.**), ովքեր այդպես են մտածում, բանադրում ենք եւ օտար համարում եկեղեցուն»: Ինչ վերաբերում է Հայր եւ Որդի Աստծու նմանությանը, ապա ակակիոսականները դա հասկանում եւ մեկնաբանում էին իբրեւ **նմանություն ըստ կամքի** (Ղուկիանոսի հանգանակում Որդի Աստված համարվում է անփոփոխ աստվածություն, իսկ էությամբ, կամքով, ուժով եւ փառքով՝ Հայր Աստծու իրական պատկեր), մանրամասները տե՛ս **Сократ Схоластик**. Церковная история, էջ 119, 121. Հմմտ. **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, էջ 280-282: Տե՛ս նաեւ **Свт. Афанасий Великий.** Посланіе о соборахъ, бывшихъ въ Ариминъ италійскомъ и въ Селевкіи исаврійском, 12, էջ 105-106:

48 **Сократ Схоластик**.Церковная история, кн.II, гл.40, с.120.

49 Բանադրվեցին Ակակիոս Կեսարացին, Գեորգ Ալեքսանդրացին, Ուրգակի Տրիոցին, Թեոդոր Կերեբենացին (Փոյուգիացի), Թեոդոս Փիլիադելփիացին (Լիդիացի), Եւգարիոս Միտիլենացին, Ղեւոնդիոս Տրիպոլսեցին (Լիդիացի), Եւդոքսիոս Անտիոքացին (Գերմանիկեցի), Պատրոփիլ Սկյութապոլսեցին: Իսկ Ասպերիոսը, Եւեբիոսը, Արգարը, Բասիլիկը, Փիլան, Փիդիլան, Եւրիքեսը, Մանան եւ Եւստաթեոսը զրկեցվին եկեղեցական հաղորդությունից, տե՛ս **Сократ Схоластик**. Церковная история, էջ 121-122, հմմտ.՝ **Созомен Эрмий Саламинский**.Церковная история, էջ 283-284:

50 Տե՛ս **Феодорит еписк. Кирский.** Церковная история.էջ 177:

հոսանքին պետք է առաջնություն տրվի: Սկզբնական քննարկումներում հաղթանակը համանմանականների կողմն էր, որոնց ջանքերով բանադրվեց անոմեականությունը, իսկ վերջինիս պարագլուխ Աեցիոսը կայսեր կողմից աքսորվեց: Համանմանականները ցանկանում էին եկեղեցուց վտարել նաեւ Եւդոքսիոսին, սակայն դա նրանց ոչ միայն չհաջողվեց, այլեւ՝ իրենց շնորհազրկման պատճառ դարձավ: Իսկ այն բանից հետո, երբ Ուրզակին եւ Վաղեսը Կ. Պոլիս բերեցին Արիմինիումի ժողովի վավերացրած Նիկի դավանագիրը, Կոստանցիուս կայսեր անմիջական հսկողությամբ, համանմանականները եւս իրենց ստորագրությամբ վավերացրեցին Նիկ-Արիմինիումյան դավանագիրը[51]:

Այսպիսով, ինչպես եկեղեցական դավանանքի, այնպես էլ Սարդիկեի ժողովից հետո քրիստոնեական արեւելքի եւ արեւմուտքի միասնացմանը միտված «տիեզերական նոր ժողովին» փոխարինած Արիմինիումի եւ Իսավրական Սելեւկիայի եպիսկոպոսական ներկայացուցչական ժողովները, իբրեւ հավատքային նոր դավանագիր վավերական հռչակեցին Նիկի բանաձեւը: Սակայն Հայր եւ Որդի Աստծու նմանության վերաբերյալ Նիկի բանաձեւումը եւս ի զորու չեղավ հաղթահարելու եկեղեցական պառակտումները: **Անոմեականների եւ համանմանականների անավարտ պայքարը միայն հականիկեական ընդդիմության վերջնական պառակտման պատճառ դարձավ**:

Հականիկեական ընդդիմության փլատակների վրա բարձրացավ դոգմատիկ նոր՝ նմանական (օմիական) երրորդաբանությունը, որը դարձավ կայսերական կրոնական քաղաքականության հենքը եւ մոտ մեկ դասնամյակ գերիշխող դիրք դրավեց եկեղեցում:

51 Կ. Պոլսում հավաքված 50 ակակիոսականները (այդ թվում երդվյալ արիոսական Մարիս Քաղկեդոնացին) անհշան ճշգրտումներով, ուղղադավան համարեցին Նիկի եւ Արիմինիումի դավանագրերը, մանրամասները տե՛ս **Сократ Схоластик**. Церковная история, էջ 122: Իսկ ընդդիմադիր համանմանականներին (Մակեդոնիոս Կոստանդնուպոլսեցի, Էլեսիոս Կիզիկիացի, Բարսեղ Անկյուրիացի, Էորդաս Սարդեսցի եւ Դրակոնտիոս Պերգամացի), ինչպես նաեւ՝ Կյուրեղ Երուսաղեմացուն աթոռազուրկ հռչակեցին. տե՛ս **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, էջ 287: